

ՏԵՂԵԿԱԳԻՐ
ՀԱՄԱՐԱՏՈՒԹԻԹԵԱՆ
1908-1911Ի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՃԴՈՅ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ՄԱՍՈՒՑԵԱԼ,

Ա Ա

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Ի 9 ՄԵՊՏԵՄԲԵՐ 1911



Կ. ՊՈԼԻՍ

Տպագր. Օսմ. Պողծակցական Ընկերութեան

Պատր Ալի Եպոնութեան հաստիք Թիր 27

1 MAR 2019

Завіт' Вінницької Організації
28-9-1971 *Олег Григорович*

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐքԱՐԱՆԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՄԱՐԱՏՈՒԹՅՈՒԹԵԱՆ

1908-1911h

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ

ԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՄԱՏՈՒՅԵԼ

U. S.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՆ

ԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Digitized by srujanika@gmail.com

4. ՊՈԼԻՍ

Տպագր. Օսմ. Պարծակցական Ընկերություն

Պատկեր Ալի, Էպուրանուն ճամսեսի 5. 27

31.01.2013

44.414

Յանձնել Քաղ. Ժողովոյ և յանձնել սպագրութեան միանգամայն
Նոյ-9 Գ. ԵՊԱ. ՄԱՆԿՈՒՆԻ

Բարձրաշխորհ

Տ. Վահրամ Ս. Արքեպիսկոպոս Մանկունի

Պատրիարքական Տեղապահ Հայոց Թուրքիոյ

և Նախագահ Ազգ. Կեդր. Վարչութեան

Պատկ. Քաղաքական Ժողովոյ

Պատկ. Ժողովոյ 7 Օգոստու 1910 թուականաւ եւ 444 համարաւ, Խորհուրդիս ուղղեալ պատօնագրով մը, կը յանձն սրանք մեզ «պատրաստով կազմելու Խորհուրդիս պատօնավարութեան կանոնական համարատուութիւնն եւ մատուցանելու զայն Ազգ. Կեդրոնական Վարչութեան, իբր մոսն ջորդուելու համար անոր համարատուութեան»:

Ըստ այդ յանձնարարութեան, համարատուութեան պատրաստութիւնը ժամանակին յանձնուած էր Խորհուրդիս Ատենապետին եւ սոյն աշխատութեան ալ ձեռնարկուած էր թէպէս, բայց պարագաներու բերմամբ, եւ Պատկ. Խառն Ժողովոյ 31 Յունիու 1911 թուականաւ եւ 1028 համարաւ պատօնագրովի եղած յանձնարարութեան համաձայն, մեր պատօնավարութիւնը՝ նոյն իսկ երկամեայ օրինական օրցանին լրացումն ետքը, վեց ամիս եւս երկարաձգուած ըլլալով համարատուութեան պատրաստութիւնն ալ յետաձգուած էր:

Խորհուրդիս Ատենապետն այս անգամ աւարտած էր Ենթայացուցած ըլլալով սոյն աշխատութիւնը, Նախորդ Ռւառմնական խորհրդոյ անդամներս՝ մասնաւոր գումարումով մը, զայն նկատողութեան առած, եւ յէս բնութեան եւ յերեւ սրբագրութեան, հաստատած ըլլալով անոր ճանութիւնը, կը փուրամն մատուցանել Պատկ. Ժողովիդ, նախորդ Քաղ. Ժողովոյ՝ ըստ օրինի Ազգ. Կեդր. Ժողովին մատուցանելի համարատուութեան կցուելու համար, եւ կը խնդրենք որ Զեր Բարձր Մրբազնութիւնը հանի հրահանգ տալ առ որ անկ է, որպէս զի սոյն այս համարատուութեան տեսնեկագիրը սպագրութեան յանձնուի առանձինն եւ անյապաղ:



12267-2.

9 Սեպեմբեր 1911

Մասնի խորին յարգամօք

Անդամ Նախորդ Ռւառմն. Խորհրդոյ Ազգ. Կեդր. Վարչութեան

Ա. Շորիկեան

Ա. Յ. Գասպարեան

Ա. Նալբանդեան

Գ. Ինատենեան

Գ. Գարաեան

Ա. Տէր Յակոբեան



ԳԼՈՒԽ Ա. Կազմութիւն, փոփոխութիւնք և վերահաստատում.

ԳԼՈՒԽ Բ. Ընդհանուր գործառնութիւնք.

1. Մաս. Ուսուցչական վկայականներ.
2. Մաս. Կրթական այցելու տեսչութիւն.
3. Մաս. Կրթական պաշտօնէից կենսագրութիւնը.
4. Մաս. Կազմ. կանոնագիր, կրթական ծրագիր և քննութեան հրահանդ.
5. Մաս. Առձեռն գտնուած կանոններու գործադրութիւնը.
6. Մաս. Տոմարները.

ԳԼՈՒԽ Գ. Ընթացիկ գործեր.

1. Մաս. Վարչային գործեր.

Ա. Թղթակցութիւնք.

Բ. Երշանաւարտներ.

Գ. Գաւառական Ուսումն. Խորհուրդներ.

Դ. Դպրոցական Հոգաբարձութիւններ.

Ե. Ազգային Ընկերութիւններ.

Զ. Պետական Վարժարանաց Ուսանողութիւն.

2. Մաս. Յարաբերական խնդիրներ.

3. Մաս. Կարգապահական — Դատական խնդիրներ.

4. Մաս. Վիճակագրական գործեր.

5. Մաս. Զուտ կրթական խնդիրներ.

ԳԼՈՒԽ Դ. Դէպքեր և անհամաձայնութիւններ.

1. Մաս. Ազգ. Կեդրոնական Վարժարանի խնդիրը.

2. Մաս. Սամաթիոյ խնդիրը.

3. Մաս. Ազգ. Որբանոցի խնդիրը.

4. Մաս. Գատըգիւղի խնդիրը.

5. Մաս. Պէջիթաշի խնդիրը.

ՎերջԱԲԱՆ

1. Ծրագիր Կազմակերպութեան Ուսումն. Խորհրդոյ.

2. Ծրագիր կանոնագրի Ուսուցչական հանդստեան մասուկի.

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՄԱՐԱՏՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՅՈՒՑ

ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՇՐՋԱՆ 1908-1911

ԳԼՈՒԽ Ա.

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ, ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՔ ԵԽ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄ

Երկրի մէջ ազգասութեան հաչակրումէն (10 Յուլիս 1908) և Ազգ. Երեսի. Ընդհ. Ժողովոյ վերակաղութենէն անմիջապէս յատոյ կազմուեցաւ Խորհուրդս. իրեւ առաջին կեդր. Ուսումն. Խորհուրդ Սահմանադրական ըրջանի՝ որ կը բաղկանար հետեւեալ անհաւուրութիւններէ. Ազգ. Կեդր. Վարչութեան նորմնափր Քաղ. Ժողովոյ 11 Նոյմ. 1908ի գեկոյագրոյն համաձայն.

Ներ ալ անդամակցին. հետեւաբար Քաղ. Ժողովի լնդունելով վերադիշեալ երկու հրաժարեալ անդամներու հրաժարականը, անոյն տեղ անդամ կարգած էր նոյն ինքն Հինգլեան էֆ և ինչպէս նաև Գուգկուն-Ֆոգ-Ինատիէի վարժարանի Տեսուչ Գալուստ էֆ. Մալաթեանը, որ երբեք չստանձնեց սոյն պաշտօնը պատճառաբանելով թէ տեղ ոյն Թաղ. Խորհուրդը չթողարքէր զինքը, այդ պաշտօնն լնդունելու:

Վերջապէս այս պայմաններու ներքեւ Խորհուրդս հազիւթէ թէ 1 Դեկտ. 1908ին կրցաւ իր առաջին նիստը գումարել Ղաւաթիոյ Խորհրդարանը, նախագահութեամբ նախկին Պատրիարք հոգելոյս Իզմիրեան Ս. Հօր և նոյն նիստին կազմեց իր դիւանը, լնարելով մեծամասնութեան քուէով ինդիր Սիմօնեան էֆ և Առենապիր և Գրիգոր Իհաւանեան էֆ և Առենապիր:

Սրդ. Խորհուրդս միայն վեց անդամով պաշտօնավարեց վեց առաջնորդ, իսկ 9 Յուլիս 1909ին կնդիր էֆ. Սիմօնեանի՝ Բերայի Թաղ. Խորհրդոյ անդամակցութեան հետեւանոք, Խորհրդէս հրաժարելուն վրայ, Խորհրդոյս առաջարկութեամբը, միշտիկին տեղ Մկրտիչ էֆ, Նորիկեան և Մալթեան էֆ փ տեղ ալ Մայր Վարժարանի անդամ Հայկ էֆ. Խօճասարեան անդամ

ენარიონდებან ჭალ. ჭილიქენ և ათხელა-
უნისალტებან აღაშვილ 9 ვილაჟი 1909წნ
სას ათბარავენ և ვილაჟი 21წნ ქედ-
ნაკანავენ և მწარმენისალტებარი კანა-
ნის ეკვათ. ს. ჭალავრებან ჯ. ფ. ჩ.:

Խօժառարեան ու Հինգեան էք. ներբ՝
կտրծիքի անհամաձայնութեան մը վրայ
նոյն տարւոյ Օգոստոսին վերջերը հրա-
ժարեցան Խորհրդոյս անդամակցութենէն,
գանգատելով որ «Խորհուրդս չափէն տեկի
կառչած է կանոնի ասուին, իր ուղղու-
թեամբ որուն չէին կրնար հետեւիլ» ե-
զածը պարզապէս թիւրիմացութեան ար-
ուենք էր թէեւ, սակայն հակառակ

Ճիշտ էր լուսաբանությունը՝ առաջարկությունը համապատասխան է առաջարկությանը:

Աւատի 6 Հոկտ. 1909ին Խորհրդէւ
եղած առաջարկութեան համաձայն, ա-
նոնց տեղ ընտրուեցան Գ. Մալաթեան և
Նիկողոսեան Վարժարանի հիմնադիր Տնօ-
րէն Յակոբ էֆ. Նիկողոսեան, պրոնց ա-
ռաջինն այս անգամ եւս չստանձնեց իր
պաշտօնը, իրկ երկրորդը հակառակ այդ
պաշտօնն ընդունած ըլլալուն, երկու նիս-
տերու միայն մասնակցելէ յեռոյ քաշուե-
ցաւ, առարկելավ թէ իր արամագրելի
ժամերը չեն համաձայնիր Խորհրդոյս նիս-
տերուն յատկացեալ ժամերուն :

Այս միջնորդին Սզգ . Վարչութեան Քաղ
Ժողովը հրաժարած և 23 Հոկտ . 1909ի
նոր Քաղ . Ժողով մը ընտրուած ըլլալով
Խորհուրդս կը փութար իր ասանամսեա
գործառնութեանց ամփոփումը տեղեկա
գրել անոր 27 Հոկտ . 1909ին և ի պա
տասխանի կ'ստանար 16 Նոյմ . 190
թուակիր պաշտօնագիր մը , որով միւ
Տեսուչ Խորհուրդներու հետ միտուին Խոր
հաւրդս ալ կը վերահատառուեր իր պաշտօ
նին մէջ :

Վերոփիշեալ երկու անդամներու ընտրութեան ապարդիւն մնալուն վրայ . Խորհրդոյս 10. Գեկամ . 1909ի և 19 Յունի 1910ի առաջարկութեամբ Քաղ . Ժողով անոնց տեղ ընտրեց Ազգ . Կեդր . Վարժարանի Տնօրէն Նախանդեան Մարտիրոս Կալաթա Սարայի Կայս . Լիսէի Ռւսուցիչ ներէն Յովհաննէսեան Յարութիւն Եֆ . Ները : Այս վերջինն ալ կարճ պաշտօնա

վարութենէ մը և տքը՝ Յունիս ամսոյ վեր-
ջերը՝ բանալիէնի մը պատճառու հրաժա-
րելուն հետեւանոք, Խորհրդոյս 14 Օգոստ
1910ի առաջարկութեան համաձայն անոր
տեղ անորում անոււանուեցաւ Ռոպէրթ Գո-

լէմի ուսուցիչներէն Բրօֆէսէօր Արքահամէֆ . Տէր Յակոբեան :

Խորհուրդս իր միամեայ պաշտօնավարութեան լրացման առթիւ գաղանի քուէարկութեամբ և միաձայնութեամբ վերահստանեց իր գիւտանը , Սզզ . Սահմանադրութեան 85րդ յօդուածին համաձայն և 4 Յունվ . 1910ին յայտագրեց Քաղ . Ժողովն :

Խորհրդոյս օրինական չքջանը կը լրա-
նար թէպէտ 1 Դեկտմ. 1910 թուականին,
սակայն նոյն միջոցին յառաջ գալով Ազգ .
ներքին տագնաատ մը, Խորհուրդս պարտա-
ւորեցաւ շարունակել իր պաշտօնը, չխո-
րար առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ

փանելու համար գործառնութեանց սովորական բնիթացքը, և յետոյ նախորդ Վարչութեան՝ առժամապէս իր պաշտօնին գրաւիսը վերադառնողուն առթիւ, այս վերջինէն սատանալով 31 Յունիվ. 1911 թուակիր պաշտօնագիր մը, որով՝ Խառն Ժողովոյ որոշմամբ, «կր ինուբրուէր Խորբագիս որ իբրեւ թեւակից մէկ ճիւզը կեզր. Վարչութեան, շարունակէ իր պաշտօնը, հիմնուելով Ազգ. Քնոդ. Ժողովով 21 Յունիվ. 1911ի որոշման վրայ, որով Կրօն. և Քաղ. Ժողովները վերատանձնած էին իրենց պաշ-

Արդ, այս յանձնաբարութեան վրայ
Խորհուրդն շարունակեց անդրնդատ իր
պաշտօնի միջնեւ 10 Յունիս 1911 և նոյն
օրը փակեց իր վերջին և 145րդ նիստը,
երբ տեղեկացաւ թէ իր յաջորդն լնարուած
է նորակազմ Քաղ. Ժողովէն, միջնեւ վեր-
ջին օրը Խորհրդայս պաշտօնի վրայ դրտ-
նուող անդամներն էին.

- Արխատակէս էֆ . Գասպարեան
 - Գրիգոր էֆ . Խճառչեան
 - Արրահամ էֆ . Տէր Յակոբեան
 - Մարտիրոս էֆ . Նալբանդեան
 - Մկրտիչ էֆ . Եղիշեան
 - Պետրոս էֆ . Գալուստեան

Իսկ Տօքթ. Ե. Մամիս, իր բազմուղագլիքին պատճառաւ տորիէ մը իվերքաշուած էր պաշտօնէ և սրաւն տեղ ուրիշ մէկի ընարուած չէր:

ԳԼՈՒԽ

ԵՐԻՑԱՆՈՒՅԲ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆ

Խորհուրդս երբ ձեռնարկից պաշտօնի ,
իր սեղանին վրայ գտաւ իւր նախորդէն
փոխանցուած բազմաթիւ թուղթեր զանա-
զան խնդիրներու վերաբերեալ՝ որոնց կար-
գաղքութեան համար հարկ եղաւ ամիս
մը զոհել :

Առաջին օրէն զիտեց թէ 1.— Ազգ .
վարժարանաց մէջ կը պաշտօնավարէին
բաղմաթիւ ուսուցչիներ և ուսուցչուհիներ
առանց ուսուցչական վկայականի . 2.—
ի չզոյէ կրթական այցելու տեսչի . Ազգ .
վարժարանք զուրկ կը մնային Խորհրդոյս
հսկողութենէն . 3. Վարժարանաց կրթա-
կան պաշտօնեաներուն կենսագրութիւնը
բոլորովին անձանօթ լԱլով Խորհրդոյս ,
իրենց մասին ո և է ինդիք ծագելու պա-
րագային . անկարելի կը դառնար անոնց
անցեալին վրայ որոշ գաղափար մը կազ-
մել . 4.— 1893ին հասասաւած Ազգ .
կրթութեան Կազմական Կանոնագիրը ,
1897ին հրատարակուած Ազգ . վարժարա-
նաց կրթական Ծրագիրն ինչպէս նաեւ
1893ին պատրաստաւած Ուսուցչութեան

ընտրելեաց քննութեան Հրահանգը զանազան աեսակէաններով թիրի և ժամանակիս պահանջութեաններուն անհամաձայն ըլլալուն՝ անսույթ բարեփոխման պէտքն զգալի դարձած էր . 5. — Մինչեւ որ յիշեալ կանոնագիրը, ծրագիրը և հրահանգը բարեփոխուելով ըստ օրինի գործադրութեան դրսէին, անհրաժեշտ էր անսույթ անթիրի գործադրութեանը մասին կարելի եղածին չոփ խստապահանջ լլալ, որպէսնեաւ յիշեալ կանոնագրի, ծրագրի և հրահանգի տրամադրութիւններուն մէկ մասը մեռեալ տառ մնալով. անկանոնութիւններ սովորուկան դարձած էին. 6. — Երկար տարիներու ընթացքին մէջ գործածուած ու սուցչական վկայականներու յատակ արձանագրութեան տումարն որ Խորհրդոյս ամէնէն կարեւոր վաւերագրութիւնը պէտք էր ներկայացներ, բնդհակառակը կը պար-

զէր արգահատելի վիճակ մը բոլորովին
զուրկ վաւերականութենէ, իսկ Ասինաւ-
զրութեան տուժարը կը մնար մեծ մա-
սամբ անստորագիր :

1. ॥ ॥

ՈՒՍՈՒՑԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ

Սրդ, Խորհուրդս մեծ կարեւարութիւն
տուաւ վկայականի ինդրոյն, որպէս զի
Ազգ. վարժարանաց մէջ Կազմ. Կանո-
նազրի 31րդ յօդուածին արտամադրութեան
հախառակ, առանց վկայականի չպաշտօնա-
վարեն ուսուցիչք և ուսուցուչք և առ
այլ, իր պաշտօնավարութեան շրջանին մէջ
երեք անգում, այն է՝ 18 Դեկտեմբ. 1908ին,
17 Յուլիս 1909ին և 7 Յուլիս 1910ին
մասնագէտ ուսուցիչներէ և ուսուցուչք-
ներէ կազմեց ուսուցչական Քննիչ Յանձ-
նաժողովներ և անռանց աեղեկագիրներուն
և քննութեան հրահանդիբն համաձայն
տուաւ ուսուցչական վկայականներ :

Որովհետեւ Մէարփիլ չէր ճանինար
կրօն . Ժողովին տուած վկայականները ,
մինչ նոյն Ժողովին անկ էր եկեղեցական
երաժշտութեան վկայական տալ , ուստի
Խորհուրդիս դիմու մին վրայ . Ազգ . Կեղր .
Վարչ . Կրօն . Ժողովն . իր 10 Մարտ 1911
թուակիր և 996 համարաւ պաշտօնագրով
արածնեց մեզ իր տուած այդ կարգի
վկայականներու հիման վրայ նոր վկայա-
կաններ տալ եկեղեցական երաժիշտնե-
րուն , որոնց լսա այսմ փոխուած վկայա-
կաններուն թիւը կը հանի տասնեւեօթի :

Այս բարեւրպով լայն սահմանով յարակի բութիւն մշակելով նաև գաւառներուն և բատ արամագրութեան Կազմ. Կանոնագրի 34րդ յօդուածին, 30 Հոկտեմբ. և 17 Նոյմ. 1909ի շրջարկերականներով և այլ գրերով արտօնեց Գաւառ. Ռւսութիւն. Այս բարեւրպները, աելույթի վրայ և մասնաւ

8 բոր Քինիչ Յանձնաժողովներու ձեռամբ քննութեան ենթարկելու կրթական պաշտօնեաները, և անոնց օրինաւոր տեղեկագրերու հիման վրայ տուաւ նաեւ բազմաթիւ վկայականներ դաւաներու կրթական պաշտօնեաներուն:

Զ. — Դաստիարակ կամ մամնագէտի վկայական՝ Ազգ. վարժարանաց մէջ երեսուն տարուան բարեփ, արդիւնաւոր և

բաց աստի, կրթական պաշտօնեաներուն
ի գիւրութիւն Խորհուրդս՝ 9 նոյմ. 1909ին
և 15 Փետր. և 12 Մարտ 1910ին մա-
սամբ վերաքննեց Ռւսուցական ընտրելեաց
քննութեան հրահանգը և անոր 6, 7, 20,
25 և 28րդ յօդուածներուն վրայ աւելցուց
այլեալ յաւելուածական տրամադրու-
թիւններ, և ջնջելով 25 և 26րդ յօդուած-
ները, բարեփոխեց սոյն 25րդ յօդուածը
վեց հատուածներով բաժանումով. և այս
յաւելուածներով ու փոփոխութիւններով
ընդունեց առանց քննութեան տալ՝
Օհական մանկապարտիզա-

սուն տարրուած բարեկամութիւն ունեցող
եանակելի պաշտօնավարութիւն ունեցող
բազմավասարակ ու ոչ վկայեալ Հայ ու-
սուցիչներու և ուսուցչութիւններու:

Ե. — Խորհուրդս նոյնպէս ընդունեց ա-
ռանց քննութեան ասաֆճանի բարձրա-
ցումը այն ուսուցչաց և ուսուցչունեաց
որոնք Խորհրդէս օգնական ուսուցի կամ
օգնական մասնագէտի վկայական ստա-
նալէ յետոյ, տասը տարիի բարենք և ար-
դինաւոր պաշտօնավարութիւն ունեցած
ևն Ազգ. գարդարանաց մէջ:

Բ. — Խորհուրդս թոյլատրեց որ, ձե-

Ա. — Օգնական սանկապարտիրդպու-
նուհեռոյ վկայական՝ անոնց՝ որոնք առ
նուազն հիմտ տարի բարւոք և արթի նաւոր
պլաշտօն վարած են մանկապարտէզի կամ
ծաղկացի մը մէջ :

Բ. — Մասնագէտ ուսուցչի վկայական,
երկրորդական վարժարաններու ընթացա-
ւարտներուն որոնք բարձրագոյն կամ երկ-
րորդական վարժարաններու մէջ տասը
տարի մասնագէտ ուսուցչութեան բարևու
և արդիւնաւոր պաշտօն վարած են:

զ. - Օդնական ռւսուցի կամ օդնական ռւսուցչուհոյ վկայական՝ Ազգ. վարժարանաց մէջ ընդհատաբար թէ անլոգիատ առ նուազն տասը տարուան բարեվ և արդինաւոր պաշտօնավարութիւն ունեցող ներուն :

Դ .— Նոյն վկայակասը նպդ գոյ Հայ
մասնաւոր երկրորդական վարժարանի մր
ընթացաւարաներուն , ինչպէս նաև Հա
լեզուն կանոնաւորութէս աւանդող երկ-
րորդ տասիհանի պիտական կամ օսար
վարժարանի Հայ լնիթացաւարաներուն և
եթէ Հայ լեզուն չաւանդուիր հոն , պա-
հանջելով միայն որ միշեալ լն թացաւարաք
գոնէ Ազգ . տարբական նախակըթուանէ մը
վկայակաս լիւան իւսնիստ :

6 — ԳԵՂ Ա. Պարբական Նախագիր-
թութիւնն աւարտած ըլլալու պայմանաւ-
մանագէտի վկայական՝ պետական կամ
օսար համալսարանի բէն վկային Հայ ու-

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՄԱՐԱՏՈՒԹԵԱՌ

Ակայականները , որոնց թիւը մինչեւ Յու-
լիս 10 կը հասնի 240ի . այս առթիւ փոխած
նաեւ Խորհրդոյ կնիքը որ 1860էն ի վեր
ործածութեան մէջ էր :

2. U U U

ԿՐԹԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒ ՏԵՍԶՈՒԹԻՒՆ

Հստ արամագրութեան Ազգ . Կրթու-
թեան Կանոնագրի 42րդ յօդուածին ,
կրթական այցելու աեսուչներ անուանուած
ին աարիներ առաջ , բայց կարճաանեւ ե .
զած էր անոնց պաշտօնավարութիւնը թո-
ակի կանոնաւոր վճարման անկարելիու-
թեան և այլ պատճառներով Կեդրանական
Խնտուկը գէկամակած բլլալով թոշակին
վճարումը ստանձնել , սոյն թոշակը թա-
լային միասուկներուն վրայ բարդելու փորձ
ըլ եղած էր , սակայն չէր յաջողած . վեր-
ապէս այդ պաշտօնն այս ու այն կերպով
անուանական դառնալով , խափանումն յա-
ռաջ եկած էր :

Խորհուրդս երբ պաշտօնի ձեռնարկեց
նկատ առաւ Ազգ . Սահմանադրութեան
հիմք յօդուածն որուն բացրոց արամու-
թբութեան համաձայն իր պաշտօնն էր՝
Հայոց Ազգին դաստիարակութեան եւ կրո-
ջութեան ընդի . տեսչութիւնը, և պարաւոր
էր Ազգ . Վարժարանաց բարեկարգութեանը
ավել . դիմեց միանդ ամայն որ, իր հակո-
չութեան աւագ պարտականութիւնն ի-
շականապէս կատարելու համար հարկ ե-
ղած միջոցներէ բացրաձակալէս զուրկ էր :
Հաս որում վարչապէս խնդիրներ անուան

աղմաթիւ էին որ Խորհուրդս շատ անշամ շաբաթն երկու անգամ նիստ կազմելով հանդերձ հազիւ թէ կը հասնէք առնց կարգադրութեան և այս կերպով ժամանակ չեր գտներ նոյն խակ դուռ կրթան խնդիրներով զբաղելու . որով Խորհուրդս չեր կրնար մօտէն հսկել Ազգ . վարչականց վրայ : Խորհրդոյս Ատենապետին իմակեցաւ միայն երրեմն այցելել վարարանաց մէկ մասը : Ի՞նչ որ անբաւական բնակունաբար :

Աւանի Խորհուրդը 1909 տարւոյ Յունի 31ին, Սեպտ. 8 և 28ին և 1910 տարւոյ Մարտ 23ին քանիցս գիմեց հախորդ Աւանի Խորհուրդը 1909 տարւոյ Յունի 31ին, Սեպտ. 8 և 28ին և 1910 տարւոյ Մարտ 23ին քանիցս գիմեց հախորդ

հուրդս թէպէտ, սակայն միւս կողմէ տես-
նելով որ Տնտեսական Խորհուրդը 1910ի
ելմտացոցին մէջ կրթական տեսչութեան
պաշտօնին համար միայն տասն և երկու
հազար զշ փ տարեթոշակ մք ոսհմանած է,
նախորդ տարւոյ համար առ այդ տասն և
և ութ հազար զշ փ սկզբունքն ընդու-
նած րլլալուն հակառակ և նկատելով որ
արդի Քաղ. Փողովն ալ չպաշտպանէր
նոյն սկզբունքը, թելադրուելով իր Ս.
Նախագահէն, որ համակարծիք չէր կրթա-
կան Տեսչութեան պաշտօնին վերահաս-
տաժան, որոշած էր առ այժմ յիտաձգել
խնդրոյն հետափնդումը, մինչեւ որ թոշա-
կի խնդրիը կարգադրուի նպաստաւոր և
գոհացուցիչ եղանակիաւ :

Իրաց կայութիւնն այս էր, երբ այդ
պաշտօնին թեկնածու կը ներկայանար ծառ-
նօթ մանկավարժ Տիար Դաւիթ Քալոն-
թարեան և Քաղ. Փողովը մասնաւոր
պաշտօնագրով մը կը յանձնարարէր լիշ-
եալին թեկնածու թիւնն ի նկատ տռնուլ և
մրցումով կատարել լնաբառ թիւնը :

Խորհուրդս ստկայն ի նկատի ունենաւ
լով Քաղաքաբարեան էֆ փ փորձառու ման-
կավարժի հանգամանքը ։ բազմամեռց ու-
սուցչութիւնը և քանն տարիէ ի վեր Պրու-
սակի մէջ հաստատած մասն ուսոր վարժա-
րանի մը հիմնադիր անօրէնութեան պաշ-
տօնն արդիւնաւորագէս վարուծ բլլալը և
մտնաւանդ այս պաշտօնին համար մրցման
դրութեան կիրառումին անհնարութիւնը,
որուչեց կրթական այցելու աեւզութեան
պաշտօնը յանձնել յիշեալին Սեպտ ի տուա-
ջին օրէն սկսեալ միամիեայ պայմանաժա-
մով և այժ սրացումը 25 Օգոստ . 1910
թուականէն յոյտագրեց Քաղ . Ժողովին :

Այս վերջինը 6 Մեկում՝ 1910 թուակիր
և Խորհրդոյս ուզգեալ պաշտօնագրավ
հաստատած ըլլալով՝ Քաղաքնիւարեան էֆ. փ
անուանումը, Խորհրդով նոյն ամսոց 14ին
յանձնեց անօր իր պաշտօնին կամոնական
պայ նամները մանրամասնով պաշտօնագրի
մը, իսկ 28 Մեկում՝ 1910ին գրաւորապէս
խնդրեց Քաղ. Փառովէն որ, սահմանուած
1000 դր., ամսութօշակէն զուրս, ամսա-
կան 500 դր., եւս յանկացուի իրեն իր-
րեւ երթեւեկութեան ծախը, ըստ օրու պայման գրաւուած էր կրթական այցելու

3 U U U

ԿՐԹԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԵՒԹՅԱ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Անառական պաշտոնատուններու և համապատասխիւններու մէջ ի վաղուց աւելուած է կենսագրազրի գրութիւնը՝ ամենակարեւոր պետք մը կը գոհացնէ առաւորիչ կերպով. այդ գրութիւնը ածուած է ժամանակի մը ի վեր Կառական վարժարաններու մէջ, մինչ մեր

Ազգ . վարժարաններու մէջ պաշտօն վարող կրթական պաշտօննեաներու մասին ընաւ կրթարկուած չէր այդ օգտակար դրութիւնը հակառակ անոր անհրաժեշտութեանը : Ռւսակի Խորհուրդը ի նկատ առնելով այս ամէնը , սրոշեց 1909 Յուլիո 15-ին սկսակ ի գործ դնել զայն . առաջին օրէն ապա գրական ծախքերու համար դժուարութիւններու մատնուեցաւ . երբ ամիսներ վերջը յուղողեցաւ սպազրել ասոլ կենսագրակրը , սրոնք պատրաստուած էին պիտական զենսագրագրերու հետեւզութեամբ և հարցման ու պատասխանի ձեւով , իւրաքանչիւր պաշտօնի համար կրկին օրինակով սրոնց մին յիտ վաւերացման իրեն քով մնալու , իսկ միւր Խորհրդոյս արամաղբութեան ներքեւ վաւերական առամար մը կազմելու համար :

Խորհուրդս կրկին գժուարութեան
մասնուցաւ սակայն, այս անգամ ալ
գործադրութեան միջացներ չունենալուն
պատճառաւ, որովհետեւ միմիայն մայրա-
քաղաքիս մէջ պաշտօնավարող ՀՅԾ երկ-
սեռ ուսուցիչներու կենսագրազրերը պատ-
րաստել աալու, տեղւոյն վրայ քննելու
և անոնց պարունակութեան ճշութիւնը
ստուգել և վուերացնելու գործն ըստ
ինքեան աաղակալի, երկարատեւ և յա-
ճախակի երթեւեկութիւններու ու հետա-
պնդումներու կարօտ էր :

Ուստի այս գործն ալ ժամանակ մը
վերապահուեցաւ Կրթական Տեսչի անուան-
ման և վերջապէս ննրկայ գպրացական
ասարհշանէն սկսեալ ձևոնորիուած էր
անոր գործադրութեան, որ ասակաւին ա-
ւարտած չէ, մասամբ կրթական պաշտօ-
նէից անյօժապատթեան և մասամբ ալ Կր-
թական Տեսչին այլապէս բնանաւորեալ լլ-
լալուն պատճառու :

Սոյն տպեալ կենսագրացքերու մէջ հարցման կարգով ճշտելի են Ա. Կրթական պաշտօնէին անսւենը, մակոմունը, և հօր անունը. Բ Ծննդեան թուականը և ծնդրդավագրը. Գ. Ա՞ր գարժարաններու մէջ, ի՞նչ ուսումներ տառած ըլլալը, ո՞ր լեզուներով խօսիլ և զրել կարենալը և ո՞ր գարժարաններէն դպրոցական վկայական ունենալը. Դ. Ա՞ր թուականին աւսուցչութեան առաջարկը մտած, ո՞ր գարժարան-

Ներէն Արիստակէս էֆ . Գասպարեանի ,
նոյն Յանձնաժողովի նիստերուն նախա-
գահել :

Սայն Յանձնաժողովն Յ-4 ամիսներ աշխատելով, ուսումնասիրեց նախորդ Ուսումնին. Խորհուրդի օրով պատրաստուած կանոնագրի ծրագիրը և այդ առթիւ բազմաթիւ ուսուցիչներու կողմանէ ժամանակին զրկուած դիտողազբերը. ինչպէս նաեւ Ազգ. վարժարանաց Բնող. Տնօրէն՝ հանգուցեալ իփէքնեան Համբարձում էֆ. է պատրաստուած և 23 Յունի. 1881 թուականին՝ Ազգ. Բնող. Ժողովին մտառուցուելով, նոյն ժողովոյ Ստենագետաց Դիւտնէն բարեկոխուած «Ազգային Կրթութեան Բնող.» Օրինաց Ծրագիրը» և պատրաստեց կանոնագրի նախագիծ մը, սակայն յետոյ Յանձնաժողովը կազմալուծուելով, չյաջողեցաւ դասաւորել և կանոնական վերջնական ձեւի վերածել պատրաստուած նախորդը:

Անցան տմիսներ և Խորհուրդու անսներ լով որ անհնարին էր սոյն գործը լրացնել յիշեալ Յանձնաժողովի ձեռքով, որոշեց այդ աշխատութիւնը աւելի լայն առնձմանի մը մէջ կատարելազործելու գաղտօփարն ի գործ դնել և այդ նպատակով հրաւիրեց մայրաքաղաքիս ձանօթ ուսուցիչներէն և ուսուցչունիներէն, ինչպէս նաև ուսումնական անձնաւորութիւններէ վաթսուն հոգի, որոնց հազիւ թէ կեսը պատասխանած ըլլալով եղած հրաւիրն՝ 9 նոյ. 1909ին, անոնցմէ կազմեց «Կրթական Վերաքննիչ Յանձնաժողով» մը, ուր յետ վիճաբանութեան որոշուեցաւ պատրաստել նախ Կազմ, Կանոնագիրը, և յաջորդպարար վերաքննիչ Կրթական Ծրագիրը և քննութեան հրահանգը, ուսափ սոյն Յանձնաժողովը գաղանի քուէարկութեամբ իր մէջէն ընտրեց «Կողմական Կանոնագրի Մասնաժողով» մը, որ կը բաղկանար Թովմաս Աճէմեան, Մարտիրոս Նալբանդյան (որ այն ատեն Խորհուրդիս անդամներէն չէր), Յարութիւն Յովհաննէսիսան, Սահմանադրամական Կուրափեան էֆ. ներէ և Օր. Կիւլիւ Ճէլալեանէ (այժմ Տիկին Հ. Պօյաճեան)

այս վերջինը չտառնձնեց իր պաշտօնը :
Մասնաժողովը հիմնուելով հանգերծ նախագիծն ըստ պատրաստուած նախագիծն արտադրություն բառը, բայց պահանջման նարկին արտադրություն արտադրություն է անհանդատ առաջարկություն :

պատօնութեան համաձայն պատրաստեց գրեթէ նոր կանոնագրի ծրագիր մը և մի քանի ամիս վերջը բերաւ իր տեղեկագիրը Գրթական Վերաքննիչ Յանձնաժողովն որ միշտ կը զումարուէր Խորհուրդի անդամներուն ներկայութեամբը . Յանձնաժողովը յաջորդաբար մի քանի նիստերու մէջ քննեց սոյն ծրագիրը և յետ վիճաբանութեան լուգունեց զայն իր ամբողջութեանը մէջ ու սկսաւ անոր յօդուած առ յօդուած քննութեանը , բայց յետոյ նկատելով որ այդ ընթացքով ասրի մը պէտք էր գործը վերջացնելու համար , որովհետեւ Յանձնաժողովը հազիւ թէ երկու երեք շարաթիր մի անգամ կրնար նիստ գումարել , նետեւապէս որոշուեցաւ պատրաստուած կանոնագրի ծրագիրն ենթարկել ուղղակի Խորհուրդի քննութեանը , յանձնարարել միանգամայն Յանձնաժողովի անդամներուն՝ որոշեալ պայմանաժամկի մը մէջ իրենց գիտողութիւնները յայտագրել Խորհուրդի սուսունափրելով նոյն ծրագիրն որ բազմազրուած և բաժնուած էր իրենց : Արդ , Խորհուրդս որոշեալ պայմանաժամէն ետքը ձեռնարկեց ծրագրի քննութեանը , և շատ քիչ թիւով եկած տեղեկագրերն , ինչպէս նաև նոյն Կանոնագրի վարչային մասը կազմով և Խորհուրդի Ստենագրաքին կողմէ պատրաստուած նախագիծ մը ոչքի առջեւ ունենալով՝ պարբերաբար բացառիկ նիստերու մէջ յօդուած առ յօդուած քննեց և որրագրութիւններով , յապաւումներով և յաւելու մնիերով վերջացուց սոյն «Ազգ . Կրթութեան Կազմ . Կանոնագիրը» , որ ասար գլուխներու բաժնումով կը բովանդակիէ հարիւր երեսունը չորս յօդուածներ , և իւր 12 նոյ . 1910 թուականուաւ պաշտօնագրովը մատոցց զայն Ազգ . Կեդր . Վարչութեան նախորդ Խառն Փողովին ի վաւերացումն . աւելցնելով թէ՝ այդ կարեւոր բայց մեր կամքէն անկախ պատճառներով յապազած աշխատութեան համար փոյթ և ջանք չէ ինայուած զայն բատ կարի ինտամիալ վիճակի մէջ նմրկայացնելու համար :

ընդհուպ և առժամաբար դնել ի զործագութիւն, մինչեւ որ հաստատուի վերջնականագէս նաեւ Սզգ . Ընդհ . Ժողովէն , բան մը՝ որ երկար ժամանակի կը կարօտէր , մինչ անոր անմիջական գործադրութիւնն ըստ ամենայնի անհրաժեշտ է , արդի կազմ . Կանոնագրի յառաջ բերած զանազան անպատճութեանց պատճառաւ . կանոնագրի մը՝ որ միմիայն կառն Ժողովոյ վաւերացումովը տան և ութ տարիէ ի վեր կը գործադրուի :

Բայց ասափի, Խորհուրդն՝ բազմմաթիւ
օրինակներով ապազրել տուաւ նոյն կա-
նոնագիրը և ղրկեց Աղջ. երեսփոխան-
ներուն, մայրաքաղաքիս Թաղդ. Խորհուրդ-
ներուն, գւաւառաց Առաջնորդարաններուն
և հայաթերթերուն, նպատակ ունենալով
պատեհութիւն առաջ որպէսզի քըն-
ութեան միջոցին փութան յայանել իրենց
գիտողութիւնները եթէ ունին, ուշղակի
Աղդ. Կեդր. Վարչութեան Խառն Ժողո-
վին ինկատառումն: Բայց որովհետեւ
վերահան՝ ծանօթ ազդային տագնապին
բերմամբ թէ՛ Ս. Պատրիարքն և թէ՛ Կրօն.
ու Քաղ Ժողովներն ամիսներով ձեւնթափ
մնացին և յետոյ այս վերջինները՝ իրենց
պաշտօնը առժամտապէս վերսանանելով
հանդերձ միշտ կազմալուծեալ վիճակ մը
պարզեցին: Աւսափի Խորհուրդիս անընդ-
հատ հետապնդումներուն հակառակ, կա-
րելի չեղաւ բազմացեալ վուերացումը
ձեռք բերել, և տեսնել երկու տարրուան
չարաչար ոշխատութեանց արդիւնքը, մեր
օրով գործադրութեան դնելով յիշեալ կա-
նոնագիրը, որ կը մնայ այժմ նորակազմ
Վարչութեան սեղաննին դրալ: [★]

(*) Յետոյ առանց քննութեամ վերադարձուած է արգի Ուսումնական Խորհուրդն:

բազիրներուն պատշաճեցնելու պայմա-
առ ։ յիշեալ մասնագէսներէն ոմանք լրա-
նելով իրենց յանձնուած աշխատութիւնը,
ետքհետէ յանձնեցին պատրաստուած նա-
պագծերը ։ իսկ մէկ մասը յօժարութիւն-
ամ ժամանակ չունեցաւ այդ աշխատու-
թիւնը փութացնելու, Արդիքէս եղած
աճախսակի հետապնդումներուն հակառակ
հետեւապէս կարելի չեզաւ ձեռնարկել
բազրի քննութեան որ կազմ ։ Կանոնա-
րի լրացուցիչ մասը պիտի կալմէր և ա-
ռոր հետ միասին գործադրութեան պիտի
քուէր յառաջիկայ գաբոցական տարեցր-
անէն սկսեալ, բան մը՝ որ մեր յաջրդ-
երուն հոգածութեան կը կարօափ ։ նախ-
ական գուտարութիւններն արգէն իսկ
արթուած ըլլալով :

Ինչպէս որ ըսինք վերեւ, «Աւտուցու-
թեան ընտրելեաց քննութեան հրահանգն»
սրդէն մասսամբ բարեփոխուած է. իսկ
նոր՝ ամբողջութեամբ վերափննութեան
և նախարկելն այն տաեն միայն հնարաւոր
ը դառնայ երր նոր կրթական Ծրագրի
շխատութիւնը վերջնականապէս աւարտի:
Ասոնցմէ զատ կան երկու կանոնագրեր
և վերափննութեան և ձեւափոխման կա-
տա, որոնք են «Ազգային ընկերութեանց
ազմական կանոնագիրը» և «Կ. Պոլսոյ կա-
ռաեալ Հայուսուցչաց օգնութեան մասուկի
անոնագիրը», առաջնոր՝ 16 Յունի. 1887
ուականին Ազգ. Կեդր. Վարչ. Խառն
ողովէն սահմանեալ, իսկ երկրորդը՝ 13
Յունի 1901ին, Ազգ. Կեդր. Վարչ. Քա-
ռական Ժողովէն գտւերացեալ, որուն
1 և 22րդ յօդուածները փոփոխուած են
Մայիս 1905ին, և անոնք կը պարաւիրեն

թթական պաշտօնեաներն ի հապատ յիշեալ
նաւուկին վճարել որոշ գումար մը , մին
և 300 դր . ամսաթոշակին վրայ կէս
ո հարիւրի և առկէ վեր թոշակի վրայ
էկ առ հարիւրի համեմատեթեսմը :

Ըսկերութեանց կանոնագրին վերա-
նուութեան ժամանակ չունեցաւ Խոր-
ուրդս, բայց որովհետեւ կրթական պաշ-
օնեաններէն ոմանք գանգատած էին Օգ-
ութեան Սնառուկի կանոնագրին արդի-
ւեին դէմ, «Օգնութեան Սնառուկ» և
Կարօնեալ Աւուուցիչ» պարբերութիւնները
ուսասացուցիչ համարելով, և այս պա-
տճան յայտագրած էր նոյն սնառուկի Հո-
պարձութիւնն առաջարկելով որ այդ

անունը փոխուի և «Աւսուցչաց հանգստեան Սնառուկի» վերածուի, և որպէս եամբ Խոր- հուրդու՝ իր պատրաստած նոր Կազմ՝ Կա- նոնագրով՝ արգելու իսկ ընդունած էր հան- գլանակի մասունքի հաստատման սկզբունքը (Տես յօդուած 56) և նկատելով որ բա- ռերը և անունը փոխելով ուեէ արդիւնք մը չէր կրնար յառաջ գալ, հետեւապէս 13 Յուլիս 1910ին, Խառն Ժողովոյ միջցաւ յանձնարարած էր միշեալ Հոգաբարձու- թեան, պատրաստել Հանգստեան Սնառուկի կանոնագրի ծրագիր մը և յդել ի քննու- թիւն :

Հոգաբարձութիւնն իրեն եղած ապա
յանձնաբարութիւնը կատարած և պաս-
րասառումծ ծրագիր մը 22 Ապրիլ 1911/
Խառն Ժողովէն Խորհուրդիս յանձնուա-
րվալով ի նախաքննութիւն, Խորհուրդի-
գիտեց թէ սոյն ծրագիրը դաստորումէ
կանոնական հանգամանքէ զուրկ էր,
որովհետեւ այս միջոցիս Խորհուրդիս ա-
տենապետը Պետական Օրբինաց հետեւողու-
թեամբ պատրաստած լԱպով 28 յօդուած
ներէ բաղկացեալ «Հայ ուստուցչաց Հանգա-
տեան Մնաու կի կանոնագրի ծրագիր» մը (՝
որոշեց հազորդել զայն յիշեալ Հոգաբար-
ձութեան, որպէս զի այդ մասին յայտն
իր զիտողութիւնները եթէ ունի, և միւ-
կողմէն բազմադրել ատալով սոյն ծրագիրը
բաժնեց իր անդամներուն յուսումնասի-
րութիւն և Հոգաբարձութեան ծրագրի
հետ ի բաղդառութիւն, մինչեւ որ յիշեա-
լին գիտազութիւնները հասնին. ուստի այ-
պայմաններով անաւարտ կը մնայ տակա-
ւին, նաեւ ուսուցչաց Հանգստեան Սըն-
առուկի կանոնագրիրը, որուն արամագքու-
թեամբ՝ Կ. Պոլոց կարօտեալ Հայ ուստուց-
չաց Օգնութեան արդի մնառուկը ջնջուե-
լով, անոր գոյքերը, արժեթուղթերը
պատրաստ գրամբ պիտի փոխանցուէի
Հանգստեան Մնառուկին:

5. UU

(ԱՐ ԶԵՐՆ ԳՏՆՈՒՄ ԿԱՆՈՆԵՐՈ
ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ)

Ա.Զ.Գ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՊԱՀ
ԿԵԴՐՈՒՆ.Ա.ՑՄԱՆ սկզբունքն ընդունած
ըլլալով հանդերձ, հակողութեան և հակա-

(*) Արուն մէկ օրինակը կցուած է տեղեկագրի

Վերջապէս Խորհուրդն՝ իր պաշտօնաւ վարութեան ամբողջ տեւողութեանը միջոցին երբեք չեղեցաւ այդ միակ ուղղութեանէն, որ էր զործել միշտ օրինաց սահմանին մէջ, և այդ սահմանէն գուրապաշտօնական թէ անպաշտօն յանձնարարութեանց կամ թելագրութեանց տեղի չտալ, ո և է իմոցիր անուշ տեղը կապելու գրութեան և կարկտան անօրինութիւնը ընելու ուղղութեան չեւելիլ, և սակայն այս ուղիղ ընթացքը յանիրաւի քննադատուեցաւ զանազան երեւոյթներով այլափոխումներով և խեղաթիւրումներով, թէ՛ մամլոյ մէջ և թէ՛ այլուր, այլեւայլ խաւերու մէջ գժգռհութեան հոսանք մը յաւաջ բերելով Խորհուրդիս հանդէպ, որ գիացաւ համբերել, գիացաւ առկալ տարօրինակ յարձակումներու, և այս ամէնը՝ ընդունելով իբրեւ իր վարձատրութիւնը, մինչեւ վերջը մնաց անյօդգողով և անիշտաչար, թողլով որ իր զործանութիւնք վկայեն և պատկերացնեն ձմարտութիւնը :

Բաց ասաի, ներկայութեան և ատե-
նագրութեան առմարդները միացուց և հաս-
տատեց գրութիւն մը, որով՝ իւրաքան-
չիւր նիստի ատենագրութիւնը նոյն նիստի
մէջ վայրկենապէս կը պատրաստուէր և
նիստի փակման միջոցին յատենի ժողովոյ
կարդարուելով, ատենագրութեանց ձաւ-
կատը ներկայ անդամներէ և Կրթական
Ծեսուչէ, իսկ վերջարանը Խորհուրդին Դի-
ւանէն և քարտասուզորէն կ'ստորագրուէին
միշտ, առանց ո և է զանցառութեան :

6. ԱԱԱ (ՏՆՄԱՐՆԵՐԸ)

Երբ պաշտօնի ձեռնարկեց Խորհուրդն ,
իր առջեւ գտաւ ուսուցչական վկայակա-
նաց արձանագրութեան յատուկ տոմար
մը , բալորովին անկանոն ու անվաւեր վի-
ճակի մէջ , որ կը բաղկանայ ՅՈ ոչ—թուա-
գրեալ էջերէ , մի քանի անգամ ընդհատ-
ուած և յետոյ չարունակուած աեզ աեզ
գծուած աւրուած , ոսյն տոմարը , որ 25
Սպրիլ 1886 թուականէն սկսեալ գործա-
ծութեան մէջ էր , կը բովանդակէ զանա-
զան կարգի 891 ուսուցչական վկայակա-
նաց արձանագրութիւնը , առանց հաշուե-
լու աւրուածները և որոնց վերջին թուա-
համարն է 775 . որսվհետեւ առաջին մասը
կը բովանդակէ 149 վկայական , բայց 25
Մարտ 1892էն կ'սկսի նոր մասնաբաժն
մը նոր թուահամարով և որ կը պարու-
նակէ 742 վկայական . ուսափ այս անկա-
նոնութեան վերջ աալու համար Խորհուրդն
պարապատել տուաւ տպագրեալ , հասաւ-

տակալմ խոչսր սումար մը բազմմաթիւ սիւ-
նակներով թուահամարի, անունի, մա-
կանունի, հօրանունի, վկայակոնաց աս-
տիճանի, քննութեան տեղեկագրի, կանո-
նական պայմաններու, որոշման թուականի,
ծննդուլայրի, ծննդեան թուականի, պաշ-
տոնալայրի, շրջանն աւարտուած վարժա-
րանի. վճարման եւ այլ ծանօթութեանց
յատկացեալ. և իր պաշտօնավարութեան
շրջանին առաջին օրէն և 776 թիւէն սկսեալ
շարունակեց ի նորոյ արուեած վկայական-
ներու արձանագրութիւնը անոնց իւրա-
քանչիւրին. առջևւը ի դիւանէ սոսրագրե-
լով և սումարին իւրաքանչիւր էջը կ'ոք-
լով. և վերջապէս Առոհուրդո՞՝ ի վիճակի
է այսօր հան արձանագրուեած 410 վկայա-
կանաց — որտոց վերջին թուահամարն է
1185 — ամբազչութեան վաւերականու-
թիւնն իւրախաւորելու:

Բաց աստի , ներկայութեան և ատե-
նագրութեան առարկները միացուց և հաս-
տակեց զբութիչն մը , որով՝ իւրաքան-
չիւր նիստի ատենագրութիւնը նոյն նիստի
մէջ վայրկենապէս կը պատրաստուէր և
նիստի փակման միջոցին յատենի ժողովոյ
կարգացուելով , ատենագրութեանց ճաշ-
կամը ներկայ անդամներէ և կրթական
Տեսուչէ , իսկ զերծարանը Խորհուրդիս Դի-
ւանէն և քարտուղարէն կ'ստորագրուէին
միշտ , սուանց ո և է զանցառութեան :

(ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾԵՐ)

Խորհուրդիս ընթացիկ գործերը բաժանելի են հինգ գլխաւոր դասակարգերու, որոնք են՝ վարչային, յարաբերական, կարգավորական, դատական, վիճակագրական և գուշակական:

1. УУУ

(ՎԱՐՁԱՅԻՆ ԳՈՐԾԵ

— Ա. Թղթակցութիւնն —

Ասորհուրդո՞ իր երկուքուկէս տարրուան պաշտօնավարութեան ընթացքին մէջ, մեծ ժամանմբ գաւառներէն համոնող պաշտօնաթղթերու և թղթածրաներու տեղատարափի մը առջեւ գտնուեցաւ շարունակ . որով թէ՛ Պոլսէն և թէ՛ գաւառէն ընդունուած ու քննուած զրերը կը համոնին մօտաւորապէս երկու հազար հինգ հարիւրի , իսկ Խորհրդէս գրուած պաշտօնագրերը (որոշապէս) հասած են 996ի՝ ի բաց առեալ զանազան առիթներով զրկուած 100ի մօտ շրջաբերականները , զեկուցագրերը և ազդարարութիւնները են . են . : Թղթակցութեանց մէջ մեծ տեղ կը բանեն ուսուցչական վկայականներու կանոնական գործողութեանց վերաբերեալ զրութիւններ :

— A. Grünwalds Urführ —

Խորհուրդս երբ պաշտօնի սկսաւ, իր
նախորդքն վոխանցուած գտաւ մայրա-
քաղաքիս Ազգ ։ վարժարանաց 1907-1908
գորոցական տարեցրչանէն շրջանաւարտ
և կուսեռ այս կերտաց քննութեան թղթա-

Արդ , մայրաքաղաքիս թաղավին վարժանաց քառամեայ արդիւնքին վրայ զաղափար մը ասլու համար ստորեւ կը դնենք բաղգաստեկան ցուցակ մը , ներկայ տարբուան շրջանաւարտներն ալ միանեն առնեալ :

Ք. Հ.	Թաղային վարժարաններ	1907-1908		1908-1909		1909-1910		(Պուրա)		1910-1911		Գլխավոր քահանա
		Մանջ	Աղջիկ	Մանջ	Աղջիկ	Մանջ	Աղջիկ	Մանջ	Աղջիկ	Մանջ	Աղջիկ	
ՏԱՐԱՎԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՔ												
1 <i>Բերդ</i>		9	25	—	9	—	12	9	46	9	22	86
2 <i>Գառագիւղ</i>		11	14	—	—	3	3	14	17	—	—	31
3 <i>Գուրու Զէշմէ</i>		—	—	—	—	6	2	6	2	—	—	8
4 <i>Խասպիւղ</i>		—	—	—	—	—	3	—	3	—	—	3
5 <i>Կէտիք-փաշա</i>		—	—	—	—	—	—	—	—	1	5	6
6 <i>Մայր Վարժարան</i>		1	—	12	10	15	19	28	29	—	—	57
7 <i>Մազրե-գիւղ</i>		—	—	—	—	8	13	8	13	—	—	21
8 <i>Պալովթ</i>		—	—	—	—	3	5	3	5	—	—	8
9 <i>Պէշիքթալ</i>		6	5	—	—	—	—	6	5	—	—	11
10 <i>Սամաթիս</i>		8	7	—	—	7	10	15	17	—	—	32
11 <i>Սկիւտար Ս. Խաչ</i>		—	11	1	12	—	—	1	23	5	3	32
12 <i>Սկիւտար Ս. Կարապետ</i>		3	1	—	—	—	—	3	1	—	—	4
13 <i>Սկիւտար Խճամբէ</i>		—	—	—	—	—	—	—	—	3	5	8
14 <i>Ս. Փրկչեան Ոլբանց</i>		—	1	—	—	—	—	—	1	—	—	1
15 <i>Օթագիւղ</i>		2	—	4	—	—	7	6	7	—	—	13
		40	64	17	31	42	74	99	169	18	35	321

Ծանօթ .— Բերայի 1907—1908 տարեցրջանի 25 աշակերտուհեաց 9ը՝ կը պատմինք լրացուցիչ դասընթացքի Բ. դասարանի, իսկ ներկայ տարուան 22 ըբառաւարտուհիներէն 9 հոգին բարձրագոյն նախակրթարանի բաժնին :

Ինչպէս որ կ'երեւի չորս տարեշրջանի սթացքին մէջ 15 թաղային վարժարան-եր միայն յաջողած են : Քանայարաններ գրադառնորդէն, ի բաց առեալ մի ամսի վարժարաններ և այս վիճակը բնաւոհացուցիչ չէ : Կ. Պոլսոյ թաղային վարժարանները թէպէս քառասունի կը հասին թիւով, սակայն ասոնց մէկ փոքր մասը մանկապարտէցներ են և մնացեալները ն կրնար շրջանաւարաններ առջ, որովհեաւ ի վիճակի չեն տարբական նախարիթարանի երեք դասընթացքներն ամրողութիւնը կազմելու աստիճամի ումանք տար-կան դասընթացքի երկու դասարանները միայն կը կազմեն, ոմանք մի ամսութիւն կը կազմեն բարդատարար : Կրթական պաշտօնէցից մեծ մասը չունի այնքան նամակ ու կորովամասութիւն որքան պէտք է ունենալ վարժարանի մը կրթական մակարդակը բարձրացնելու համար : Խնդիրնալարգացման գաղափարը, ինչպէս նաեւ ուսուցանելու լաւագոյն ե-

թէ ինչու վերոցիշեալ 15 վարժարան-
երը ամէն տարի զջանաւարտ չեն ու-
նար, կամ ունեցողները ստուար թիւով
են արտադրեր, տառաց պատճառները ման-
ամանելլ՝ շատ հեռուները կը տանի մեզ,
իսկ թէ իրեւ գլխաւոր պատճառ կը



կը համրուին : Դժբախտաբար Ազգը չէ յա-
ջողած ունենալ ցարդ վարժապետանոց մը՝
որուն պէտքը զգալի եղած էր 40-50 տարի
առաջ, և մտնկավարժութիւնը մնցի հա-
մար անհասկնալի լեզու մ'է տակաւին :
Հետեւաբար ցորչափ հիմնական արտասո-
վոր միջոցներ ձեռք չառնուին, ցաւ
ի սիրտ կ'ըսենք թէ մեր վարժարանները
այս լնիթացքով՝ դատապարակալ են մնալու
արդի կացութեան մէջ, շատ քիչ տարբե-
րութեամբ :

— ፭. ቅዱስ. ማጠሪ. ከዚህንም

Ասորհուրդս կարեւոր նկատեց գաւառ-
ուաց կրթական վիճակն եւս իր հոգածու-
թեան առարկայ ընել և ջանաց հետզհետէ
ընդլայնել անոնց հետ իր յարաբերութիւն-
ները, զորս կանոնաւորապէս մշակելու
համար, յատուկ շրջաբերականներով և
մասնաւոր գրեթով, բաղմիցս յոնձնարա-
րեց Առաջնորդներուն և Գաւառ. Վարչ,
Քաղ. Ժողովներուն, կազմել կամ վերա-
կազմել Գաւառ. Ռւսութիւն. Խորհուրդները
և յարաբերութեան մէջ դնել զանոնք
Խորհուրդիս հետ. արդ այս մասնաւոր

— Ե. Ազգ. Ընկերութիւնները —

Երկրին մէջ Սահմանադրութեան վեհասատումէն անմիջապէս յետոյ, բաղմթիւ ընկերութիւններ հաստատուեցան մէն կողմ՝ իսկ նախորդ քեծիմի ընթացն մէջ խափանուած նախկին ընկերուններ վերահստատուեցան, Ագդ. իշխութեան գտակերացման ենթարկելով իշոց կանոնագրերը որոնք կը յղուէին Խորերգիս ի նախաքննութիւն, այս կերպով սահաւոր զբաղում մը պատճառելով մեղորունակ:

թիկի, 15 Քղիկ, 16 Եօղլատի, 17 Զարսանձագի, 18 Արաբկիրի, 19 Զմիւռնիոյ, 20 Ռոտառպոյի, 21 Եղեսիոյ, 22 Վահայ, 23 Գօնիքայի, 24 Ամասիա-Մարզուանի, 25 Քէմափոյի, 26 Հալէպի, 27 Պիէճիքի, 28 Աղրիանուպոլսոյ Ռւսումն. Խորհուրդները, որոնցմէ Երգնկայի, Արաբկիրի, Կեսարիոյ, Ռոտոսոլոյի և Տիգրանակերպի Խորհուրդները վերսատին կազմուելով վաշերացուած են կրկին անդամ Խորհուրդէս 18 Յունիս 1910էն մինչեւ 30 Մայիս 1911:

— Պ. Պարոցական Հոգաբարձութիւններ —

Մայրաքաղաքիս թաղային վարժարատ-
նաց համար Հոգաբարձութեանց կազմու-
թիւնը՝ լսա ՅՆրդ յօգուտծի կազմ. Կա-
նոնապրոյ պարաւորիչ չէր, և Խորհուրդիա
կարծիքով օգաակար ալ չէր, ուսափ այս
տեսութեամբ ոյժ չտաւաւ անոնց բազմա-
նալուն, այլ սակայն ջանաց որ վերսիշեալ
յօգուտծի տրամադրութեան հոմանայն
երր կազմութին անոնք, ստանան անարոշ-
ման Խորհուրդիս վաւերացումը. այսու
հանդերձ գտնուեցան թաղեր, որ այս
պարտականութեան մէջ թերագան :

19 Յունի, 1909 էն մինչեւ 21 Մարտ
1911 Խորհուրդիս վաւերացուած դպրո-
ցական Հոգաբարձութիւններն են՝ 1.
Մագրիգիւղի, 2. Սկիւտար Ս. Կարա-
պետի, 3. Գուրուչչմէի, 4. Պալաթու,
5. Սարեար-Ենի մահալլէի, 6. Պէշիքթաշի,
7. Խասգիւղի, 8. Էժմէյտանի, 9. Սկիւ-
տար Ս. Խաչի, 10. Օրթագիւղի, 11.
Ռումէի Հիսարի, 12. նորէն Օրթագիւղի
Հոգաբարձութիւնները:

ընկերութեանց և այս կերպով սոյն կանոնագրի տրամադրութեանց պատշաճեցուցուած օրինակները մաքուրի վերածուելէ ետքը՝ Ազգ . Կեդր . Վարչ . Խառն Ժողովոյ վաւելացման ենթարկել զանոն ստուգելով միանգամայն , պատկանեալ պաշտօնական մարդիններու միջոցաւ , ընկերութեանց հիմնադիր անդամներուն անձնական հանգամանքը :

Արդ, 3 Փետր. 1909էն մինեւ 23
Մայիս 1911, այս կերպով վաւերացման
ենթարկուած լնկերութիւնները կամ միու-
թիւններն են:

- 1 . Բերայի Հայ Երիտասարդաց Միունիքիւն .
 - 2 . Պէօլիւքտէրէի Բարեգործական Ընկերութիւն .
 - 3 . Սարըեար-Եէնի Մահալլէի Ուսումնասիրաց Ընկերութիւն .
 - 4 . Միացեալ Ընկերութիւն Հայոց .
 - 5 . Դպրոցասէր Տիկնանց Ընկերութիւն .
 - 6 . Թօփառուի Յառաջդիմասէր Ընկերութիւն .
 - 7 . Ակնայ Նարեկեան Ընկերութիւն .
 - 8 . Շիշիի Հայ Տիկնանց Միունիքիւն .
 - 9 . Գարթալի Կրթասիրաց Ընկերութիւն .

10. Սամաթիոյ Յառաջդիմասէր Հայունեաց ընկերութիւն.

11. Սամաթիոյ Նոր Թաղի Ներսէսեան
Ընկերութիւն .

12. Խասկիւղի Ընթերցասիրաց Ընկերութիւն.

13. Արարակիրի Կրթասիրաց Հնկերութեան

14. Բինկասնի կրթասիրաց Ընկերու-

15. Տիկին առաջ գտնելու օրեւնութեան մասին

16. Սեբաստահայ Ռւսանողական Միութենաց

17. Գասպարիւղի Մասեաց Հնկերու.

18. *Փոքր-Յամանի Մելոպեան կը բ-*

թասիրաց Սիոնթիւն .
Հետեւեալ բնկերութեանս և ևաճաճաւ

բերը՝ թէպէտ յետ սրբագրութեան ժա-
մանակին վերադարձուած են, սակայն
աքուրի վերածուելով վերստին չներկա-
ցուելուն պատճառաւ կը մնան ցարդ
նվալւեր և որոնք են.

1. Ազգանուէր Հայուհեաց ընկերութիւն .
 2. Ակնայ Լիճ գիւղի Ընկերութիւն .
 3. Բերայի Խստեան վարժարանի Սառուց Միութիւն .
 4. Մեծ Արմբանի Կրթասիլրաց Ընկերութիւն .
 5. Տիվրիկի Կասմայի Բագրատունեաց Հնկերութիւն .
 6. Օրթագիւղի Հայ Երիտասարդաց Հնկերութիւն .
Իսկ ասոնցմէ գուրս՝ հետեւեալ Ընկերութեանց կանոնագրերը քննուած և սրբագրուած չեն ցարդ, կանոնական պայմաններու թերութեանց պատճառաւ :
 1. Սկիւտարի Յառաջդիմական Միութիւն :
 2. Խութիկ գիւղի Ընկերութիւն .
 3. Կէտիկ Փաշայի Կրթասիլրաց Ընկերութիւն .
 4. Պէյգօղի Դպրոցասիլրաց Ընկերութիւն .
 5. Պօյանը գիւղի Արշալոյս Ընկերութիւն .

Բաց ասափ, գաւառներէն ալ եղած են
իմումներ յաճախ . տեղւոյն վրայ կազ-
մուած ընկերութեանց կանոնագրերը վա-
երացնելու խնդրանօք, սակայն Խորհուրդս
իշտ մերժողական պատասխան տուած է
ոչդ դիմումներուն, պատճառաբանելով
ԵՇ լստ տրամադրութեան երրորդ յօդ-
ւածի Ազգ Ընկերութեանց Կազմ . Կա-
ռունազրի, գաւառաց մէջ կազմուած ըն-
երութեանց կանոնագրերուն վաւերա-
սումը Գաւառ . Վարչ . Խառն Ժողովնե-
րուն իրաւունքն է . և այս տեսութեամբ՝
Խորհուրդս վաւերացման հնմարկած է,
ետ քննութեան, այն ընկերութիւնները
իշտայն որոնք գաւառին ինպատ մայրա-
կազմաքիս մէջ կազմուած են, իրենց կեդ-
ան ունենալով Կ . Պովալ :

Հստ որում վերոյիշեալ Ընկերութեանց
դործառնութիւնները հակակշռելու իրաւ-

մանց յայտագիրը», միմիայն ի գիտութիւն։
4. Ուսուցչական վկայական տալու
գործողութիւնը տեւական հանդամանք
ունենալուն պատճառաւ պէտք է առա-
ջարկել Մեարիթին որ վկայականներու
վուերացումը՝ արտօնագրի խնդրէն բոլո-
րովին անջատ խնդիր նկատելով զարժան
ի գործ դնէ։

5. Պետութեան առջեւ պատասխանաւուն և յարաբերութեանց միակ միջոցն ըլլալով՝ Պատրիարքարանն և Առաջնորդարանները, կառավարութիւնը պարտաւոր է միահան անընդ անձնել կրթական նպաստ :

6. Օսմաներէնի ուսուցչն ընտրութիւնն ալ կը պատկանի Ազգ . պատկանեալ մարմիններու :

8. Հարկ է ընդգիրմանալ օտարահպատակ ուսուցիչներու պաշտօնավարութեան դէմ դրուած արդելքին, որովհետեւ արդարացի և օգտակար չէ այդ արդելքը. Քանի որ ինչպէս պետական, նոյնպէս և ազգային վարժարանները հարկադրուած են օդուելու օտարահպատակ մտմնաւ պէտներու կարողութենէն :

9 . Անպատեհութիւն մը չկայ որ համաձայն նախարարական պահանջին , ոչ միայն շրջանաւարաններու վկայականները , այլ նաև ռւսուցչական վկայականներն ունենան երկու բաժին , մէկը հայերէն , միւսը թուրքերէն :

10. Զինուարագրութենէն զերծ կա
ցուցման խնդիրը չունի ուղղակի ո'և է
առնչութիւն Պատրիստքարանի առանձնա-
շնորմանց հետ, միայն թէ Ազգ . Կեդր
վարժարանի աշակերտաց համար իրբեւ
առժամեայ տնօրինութիւն բացառիկ թուլ-
տուութիւն ձեռք բերել հարկ է . և իրբեւ
հիմնական կարգագրութիւն, յիշեալ վար-
ժարանի դասարանները եօթի բարձրացնել
անհոգեցն է :

11. Զինուորագրութեան առթիւ միայուն և այցելու ուսուցիչներու միջնւ խտիր դնել բանաւոր չէ . արդարութիւնը կը պահանջէ որ բոլոր այն անձերը , որք արհստով ուսուցիչնեն , բայց այցելաբար կը դասախոսեն և այս իրողութիւնը՝ ինչպէս նաեւ անոնց պաշտօններու վրայ գտնուիլը կը հաստատուի պաշտօնական թղթերով , զերծ միան անխարաբար զինուորագրութենէ . պէտք է միջոցներ ձեռք առնել այս տեսակէար պաշտպաններու համար Օսմ . Խորհրդարանի մէջ :

12 . Այդ մասին կարծիք յայտուած է
առաջին հատուածով , Մեարիթի պաշտօն-
եային չզլացուիր ո և է վիճակագրական
աեղեկութիւն :

13 . Կղերական վարժարաններու մասին եղած պահանջումներուն դէմ, սկզբունքով ու է առարկութեան տեղի չկայ :

14. Պէտք է ջանալ որ կառավարութիւնը
ու և է հակակշխու ի գործ գնելու իրաւունք
չունենաց . ի մասին կրթութեան ի նպաստ
արուած ներկայացումներու , նուագահան-
դէմներու ևն . որոնց համար պէտք է ար-
տօնութիւն ստանալ մը միայն Պատրիար-
քարանէն և կամ առաջնորդարաններէն ,

Մեր սոյն տեղեկագիրը հազիւ թէ 1911
տարւոյ սկիբը ուշադրութեան առնուե-
լով, այս անգամ ալ ինդիրը՝ 31 Յուն-
ուար 1911ի պաշտօնագրով Խառն Ժողո-
վեն յանձնուեցաւ կրթական մասնախումբի

մը ի վերաբննութիւն, այդ յանձնախումբը, որ կը բաղկանար Խորհուրդիս Ատենապետէն, ինչպէս նաև Ստեփան Կուրտիկեան և Ռուբէն Զարդարեան էֆաներէ, յաջորդական չորս նիստերու մէջ վերասին քննելով վերոյիշեալ ինդիբները, 26 Փետրուար 1911ին մատոց իր տեղեկագիրը նոյն ժողովին, հիմնուելով Խորհուրդիս տեղեկագրութեան և յարակից պաշտօնապրերու վրայ. ոտյն տեղեկագրով կը հաստատուէր Խորհուրդիս կարծիքը, ըստ վերոյիշեալ ամփոփումի և կը գնահատուէր ապրուած խնամեսու աշխատութիւն:

Ի վերջոյ վերոյիշեալ տեղեկագիրը
նկատողութեան առաւ կամ ժողովը, և

ի ներկայութեան Խորհուրդիս անդամոց՝
հատուած՝ առ հատուած քննելէ և առ այդ
Խորհուրդիս Ատենապետին բացարձու-
թիւնները լսելէ ետքը, խմբագրական թե-
թեւ բարեփոխութեամբ լնդունելց վերո-
յիշեալ տեսութիւնները, զոհունակութիւն
յայտնելով թէ՛ Խորհուրդիս և թէ՛ միշեալ
մասնախութիւնն աշխատութեանց համար:

Ասոր վրայ Խորհուրդս մղում տուաւ
ուսուցչաց վկայականներու փոփոխման և
ցուցակներու պատրաստութեան, Ազգ .
վարժարաններու արտօնագրի գործողու-
թիւնը ամենէն առաջ լուցներու համար ,
և երաժիշտներու վկայականներու հետ
միասին 257 չին վկայականներ փոխեց , (*)
անոնց տեղ նորեր տալով , թուրքերէնի
մասնաբաժնով , միւս կողմէն 23 Մարտ
1911ին Տեղապահական Շրջաբերականով
հրահանգ տուաւ գաւառներուն , վարժա-
րաններու արտօնագրի խնդրոյն կարգա-
դրութեան համար դիմել աեղային կա-

սավարութեան, պահանջուած ցուցակները, ուսուցչական վկայականները և օսմ. թէղքերէները յանձնելով անոնց, իսկ կրթական-յարաբերական միւս բոլոր խին-դիրներու համար սպասել նոր հրահանգի, առ այժմ պահելով իրաց արդի կացութիւնը, մինչեւ որ անոնց մասին վերոյիշեալ եզրակացութեանց հիման վրայ վերջնական համաձայնութիւնն մը գոյանայ կրթական նախարարութեամ հետ : Բաց աստի, Խորհուրդս նոր Կազմական Կանոնագրի հիման վրայ պատրաստեց Թուրքերէն լեզուով «ուսմանց յայտագիր» մը կ. Պոլսոյ և գաւառաց Ազգ . գարժուրաններու յատուկ, և մանկապարտեզներէն սկսեալ մինչեւ բարձրագոյն նախակրթարանները սասնեւերկու տարուան ընթացքին մէջ աւանդելի դասերը բովանդակող, և բազմաթիւ օրինակներով տպագրել տալով զայն վրկեց գաւառները, վարժարարաց արտօնագրերու գործողութեանց առթիւ ներկայացնելու համար Մեարիթի տեղային պաշտօնեաններուն, վերոնշանակեալ ցուցակներու հետ միասին արուած հրա-

Հանգին համաձայն յիշեալ գործողութիւնները կատարուեցան և կատարուելու վրայ են տակաւին գաւառներու մէջ։ ինչպէս որ կ'սառուզուին մեզի եկած ցուցակներու օրինակներէն։ որո՞նց պատճէնները տեղային կառավարութեանց յանձնուելու առամբանուած են ըստ սոյն հրահանգի։

Բայց մայրաքաղաքիս թաղային վարժանաց արտօնագրի խնդիրը կարգադրության մեջ չէ տակաւին, հակառակ անոր որ մեծ փուլով պատրաստուած էին, անոնց վիճակագրական ցուցակները ամենամեծ մասսամբ հաւաքուած և նորոգուած էին պաշտօնի վրայ զանուող ուսուցիչներու և ուսուցչուիներու վկայականները, ինչպէս նաև Օսմ. Թէղքէրէները, այսինքն թէ 258 կրթական պաշտօնեաներէն 190ի վերաբերեալ թուղթերը, իսկ 68 հոգիի — որոնց մէկ մասը ոչ-վկայեալ — վերաբերեալ-ները կարելի չեղաւ հաւաքել եղած սահմանադրուուն հակառակ :

վերոյիշեալ գործողութեանց կատարման
համար, խոստանալով նոյն միջոցին չե-
տապահողել այն ռւսուցիչները և ռւսանող-
ները, որոնք զինուորագրութեան տարիքին
թեւակոխած են, պայմանաւ որ այս թոյլ-
առուութիւնը չկրկնուի. Այդու պայմանաժամբ
գեկուցանող Կրթական Նախարարութեան
10 Մարտ 327 (911) և Արդարութեան
գործոց Նախարարութեան 20 Մարտ 327
(1911) թուակիր քեզիերեները յըուած ըլ-
լալով Խորհուրդիս, ինդիրը հազորդուե-
ցաւ գաւառական Առաջնորդարաններուն
25 Մարտ 1911ին:

Որովհետեւ յիշեալ խնդիրները միջազգ-
գային հանգամանք ունէին , այս միջոցին
համաձայնութիւն գոյացած էր Հայոց ,
Յունաց , Պուլկարաց և այլ Պատրիարքա-
րաններու միջեւ , համբաւաստ դիմումներ
ընելու համար կառավարութեան մօտ , և
այս նպատակաւ կազմուած էր միջազգա-
յին Յանձնաժողով մը , որ պատրաստեց
թէ՛ կրթական թէ՛ զինուորազգութեան
խնդիրներու մասին երկու ծրագրեր , ո-
րոնց առաջինը շատ քիչ տարրերութեամբ
կը պարզէր , գրեթէ Խորհուրդիս տեղեկա-
գրով պարզուած միեւնոյն տեսակէանները ,
և որոնց հիման վրայ տրուեցան անշատա-
րար Թագրիբենք , զօր լրջօրէն նկատողու-
թեան առաջ կառավարութիւնը և խնդիրը
ուսումնասիրելու համար կազմեց մասնա-
խումբ մը , որ կը բաղկանայ Սրբարու-
թեան , կրթական և Պատերազմական նո-
խարարներէ , որոնք հազիւ թէ Յուլիա-
մասոյ առաջին օրերուն ձեռնարկելով ի-
րենց պաշտօնին , պատրաստեցին իրենց
տեղեկագիրը , նախարարաց - Խորհուրդին
մատուցանելու համար : (*)

3. U U U

(ԿԱՐԳՎԱՊԱՀԱԿԱՆ-ԴԱՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ)

Խորհուրդս առաջին օրէն մասնաւոր ուշագրութեամբ ի նկատի ունեցաւ կենա սական կարիւորութիւն ունեցող կարգա-

պահութեան խնդիրը, որ վարժարանական է . երբ կը պակսի անիկա, անօգույն է Կրթական հաստատութիւններէն ար-

(*) Նախարարոց Խորհութեան իր 19 Հոկտ. 911
Նիստին մէջ ընդունած է այն տեղեկալիքը, ունէ
փոփոխութեամբ:

իւնք մը սպասել, մինչ երկրին մէջ յա-
ւած եկած անակնկալ մեծ յեղաբջումը
ուղի տուած էր իրարանցումի մը : որ
սպասնար ջլատել զսպողուկան ոյժերը,
որուն հետեւանքով ժողովրդական ծանօթ
ինուութեան շրջանին խառնաշփոթու-
թիւններ կը մանէին նաեւ Ազգ : վարժա-
անններու ուեմէն ներս և կարդապահու-
թիւնը կը խանգարէին . ուստի Խորհուրդս
կարելին ի գործ դրաւ իր անձուկ միջոց-
ներով, որպէս զի այդ խանգարութիւնները
մեծ համեմատութիւններ չստանան, և ու-
րախ ենք արձանագրելու թէ այդ նպա-

տակով եղած անօրինութիւններ ապահովութիւնը, ի բաց առեալ մի քանի տիսուր դէպքերը, որոնց վրայ առաջնահանութիւնները բաժնին մէջ, Վերոյիշեալ իրողութիւնները միայն և Պուտյ մէջ չահմանափակուեցան, այլ տարածուեցան նաեւ գաւառները, և որոնց արձագանգը հասաւ մեզ չառ անգամ, և Խորհուրդո՞ւ պարտաւորեցաւ գաւառներու այդ կարգի դէպքերով ևս զբաղիլ, եղած պաշտօնական դիմումներու հիման վրայ և թանկագին ժամեր զոհել ի սէր կարգապահութեան պահպանման, պէտք է հոս մասնաւունչել մասնաւանդ որ գաւառներէն եղած դիմումներն անկանոն լնթացք մը պարզած են յաճախ, այսինքն թէ գտառային քաղաքներէն դիմումներ եղած են շարունակ ուղղակի կեդրունին, փոխանակ նախ դիմելու առաջնորդարաններուն և ի հարկին անոնց միջոցաւ յարաբերութեան մասնելու, ինչ որ կանոնաւորութիւնը կը պահանջէր, արդ այս բնթացքն ըստ բարեկանին տաղտուկ կը պատճառէր Խոր-

Կարգապահութիւնն երերուն հանդա-
մանք ունեցած է մանաւանդ տուջին
տարրուան ընթացքին մէջ և խանդարուած
է երբեմն թաղ . Խորհուրդներու . երբեմն
կրթական պաշտօնեաներու . և երբեմն ալ-
գոլոցական աշտվերաներու կողմէ հաւա-

սարապէս և զանագան երեւոյթներու ներքեւ, միշտ քիչ շատ վնասելով վարժարաններու յառաջդիմութեանց : Հակառակ Խորհուրդիս ցոյց տուած խստութեան, թաղ . Խորհուրդները չեն գագրած կրթական պաշտօնեաններ արձակելէ անհարկի ու անժամանակ : Գտնուած են կրթական պաշտօնեաններ ալ, որոնք փոխագարձաբար դասակրութիւններ ունեցած և անպարտածանաչ ընթացքի մը հետեւած են, երբեմն խանգարելով նոյն իսկ վարժարանի բարեկարգութիւնը, որուն պահպանման փոյթ տանելու պարտականութիւննն : Այս կարգի պատահարներէն ազդուած և երես տուած են վարժարանի աշակերտները, մէկին կոմ միւսին թեր ելլելով, վարժարանի վարչակին գործերուն միջամտելու չափ յառաջ երթալով, և ուսուցչական փափոխութեանց ընդդէմ կամ ինպատ ցոյցեր կազմակերպելով՝ հուսկ ուրեմն լմրուա վիճակ մը սահմաննուն պատճառաւ աշակերտաց մասնակի արտաքսումներ ի գործ զրուած են տեղ տեղ : Ասոնցմէ զատ զրեթէ անպակաս եղած են ուսուցչական թոշակի անշգմար թողուելուն կամ յանիբաւի զեղչուերւն գէմ բողոքներ և անհամաձայնութիւններ, զորս լսելու, կարգադրելու և այդ մասին արտուած ու չյարգուած ուսուցչիներուն պարձադրութիւնը հետաշ

սպնդելու համար ակամայ ժամանվածառ եղած է Խորհուրդու շատ անգամ, եղած զրկանքը գարմանելու և երբեմն բողոքող ուսուցչին դատարան դիմելու անպատեհութեան առջեւը առնելու նպատակով։

Այս կարգի և այլ նմանօրինակ խնդիրներու կարգադրութեան համար Խորհուրդու դատարանի պաշտօնն ստանձնած է երբեմն և իր պաշտօնավարութեան շրջանին մէջ, առժամապէս պաշտօնէ գոտորեցուցած է Սամաթիոյ վարժարանին ուսուցիչներէն մէկը՝ (Հրանգ Թողուտեան) գասալքութեան պատճուռու, որովհեաւ լիշեան անժամանակ թողլով իր պաշտօնը, Ակիւտարի մէջ պաշտօն ստանձնած էր և երբ Սամաթիոյ Թաղ. Խորհուրդին բողոքին վրայ, աղդամարաւեցաւ իրեն՝ յատենի Խորհրդոյ, վերստաննել իր նախորդ պաշտօնը, անսատած էր։ Խորհուրդու կիսամսայ թո-

Պոլսէն մեկնած ըլլալը մակագրուելով, ուստի թերթերուն մէջ զեկուցուելէն զատ, իր մեկնած տեղը՝ Զօնկուլտաք, կոչնագիր մը եւս ուղղուեցաւ 15 օրուան նոր պայմանաժամով, որ սարրագրուած ու վերադարձուած ըլլալով հանգերձ, ամբաստանեալը չներկայացաւ որոշեալ օրը, ընդհակառակը հեռագրած էր թէ իր բացարագիրը թղթատարին յանձնուած է, որով հասկցուեցաւ թէ չուզէր անձամբ ներկայանալ, մինչ Խորհուրդս իրեն կ'ըսպասէր և ոչ թէ բացատրագրի որ արդէն ժամանակին չի հասաւ: Ուստի ի բացակայութեան քննելով խնդիրը լիազումար նիստի մը մէջ, առձեռն գանուող փաստաթղթերու հիման վրայ և ի նկատի ունենալով անոնց ծանրակշիռ հանգամանքը. դասապարտեց զինքը, արդիկելով Ազգ. վարժարանաց մէջ կրթական պաշտօն վարելէ և չնչելով իր ուսուցչական վկայականը. յաջորդ նիստին փակումէն ետքը հասաւ անպատկառ ոճով խմբագրուած վերոյիշեալ բացատրագիրը որուն մէջ ո և է ակնարկութիւն չկար ամբաստանութեան նիւթ կազմող արարքներու մասին, իրեւ անձնապաշտապանութիւն ծառայելու ո և է հանգամանք չունէր և մանաւանդ ստորագրութիւն ալ չէր կրեր: Հետեւապէս ոյն գրութիւնը նկատողութեան չառնուեցաւ:

չպատասխանեցին, ոմանք հաղորդեցին տեղեկութիւններ, որոնք հետու էին անթերի նկատուելէ. ասոնց մէջ մատիվրայ համրուող մի քանի գաւառներ միայն լիակատար ու կանոնաւոր վիճակացցցներ զրկեցին, որոնք արժանի էին իրեւ նմոյ ծառայելու: Վերջապէս այս պատճառաւ կարելի չեղաւ գաւառական վարժարաններու վիճակացոյցներն ամփոփել, դասաւորել և հրասարակութեան յանձնել. բայց վարժարանաց արտօնագրերու գործողութեան ասթիւ հետզհետէ հասած են վերջերս լիակատար ցուցակներ, որոնց վրայ հիմնուելով կրնան պատրաստուիլ յառաջիկացին գաւառ. վիճակացոյցներ:

Արդ, Խորհուրդս բաւականացաւ 15 Յուլիս 1910ին հրասարակելով «Կ. Պոլսոյ թաղային վարժարանաց վիճակացոյցը» միայն, որ կը պարզէր 1 Յունիս 1910ի վիճակը:

Սոյն վիճակացոյցով երեւան կուգարթէ վերոյիշեալ թուականին, 44 թաղային և այլ վարժարաններ յաճախող երկուու աշակերտաներու ընդհանուր գումարը կը հասնէր 6516ի, որոնց 2058ը ձրիավարժ: Սոյն վարժարաններու մէջ կը պաշտօնավարէին 319 կրթական պաշտօնեաններ որոնց 166ը ուսուցիչ և 153ը ուսուցչունի, այցելուներն ալ միասին առնելով, որոնց մէկ մասու հարկ է գեղակը յնդհանուր գումա-

4. U U U

(ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ)

